

Զ Ե Ռ Ա Գ Ի Ւ Թ

□ ○ □

Մարդիկ իրենց մտաց արտօյայտութիւնները հաղորդելու համար բազմապիսի միջոցներու դիմած են, և զիսաւորաբար նշանազրերու միջոցվ կրցեր են մշալնչնաւորել իրենց զաղափարները:

Զասոնն զրուազելու հմիմար գործածեր են քար, մետաղ, կեղե, տերե, տախտակ, չոր կամ թթուն կաւ, փղոսկր, մագաղաթ, պապիր, թուղթ, և այլն:

Հոռոմայեցիք ի սկզբան կը գործածէին պապիր, ինչպէս լատին և յոյն կայսերը: Քահանայապետական հին կոնդակը եւս այսպէս էին: Ութերորդ դարուն կ'երեւն մազաղաթը, յետոյ բամբակեթուղթը, մետասաներորդ դարուն կ'աներեւութանայ պապիրի գործածութիւնը:

Պապիրի վրայ զրելու համար կը գործածէն փորբիկ և նուրբ երկաթէ կամ պղնձէ սլաքներ, կամ եղէզներէ յարմարցուած գրիչներ: Մեկանի զոյնը զանազան կը գտնենք և ընդհանրապէս սեազոյն է:

Արդի Եւրոպական զրականութեան աղբերներն են Յոյն կամ Լատին, Սլաւ կամ Գոթական լեզուց: Կոստանդնուպոլիսի յոյն՝ հիմն զրին մաւալ զրականութեան:

Յոյն ցրիստոնէական զրականութեան զրյութիւնը կայ նախապէս՝ բարի կամ պղնձի վրայ երկաթազրի (onciiale) ձևով, որ յետոյ կէս երկաթազրի փոխուեցաւ: Յոյն ձեռազրաց մէջ կը գտնենց երկաթազրիս մինչև իններորդ դար. ապա կը սկի էկս-երկաթազրի, և յետոյ փոքրազրի (minuscule) անցման դարը: Տասներորդ դարուն ընդհանրացաւ փոքրազրիը: Իսկ մեր մէջ՝ բոլորզրիք: Այս ձեզ աւելի արագազրիք (tachygraphes) կը գործածէն, իսկ զեղեցկազիրը (calligraphes) զլիազրերը, այսինքն երկաթազրերը: Յետոյ ժամանակով մտաց միայն փոքրազրը փակազրերով, իսկ երկաթազիրը գործածուեցան սկզբնազրերու կամ զիսազրերու համար:

Բարիգոյու կայսերական զրատունն ունի գեղեցկագոյն ձեռազրիը՝ ծիրանաւոր Մազարէնի Աւետարանը և Գրիգոր Նազիանցացւոյն հեղինակութիւնը: Փլորենտիոյ Լաւրենտիան Գրատան թանկազին զարդէն են Պլուտարքոս և Աւետարան մը: Կայսերական զրատունն ունի 1007 ին զրուած Ծիսարան մը, ուր կայ նաև Լուդովիկոս թիֆրուած ժի՞ս նուիրուած յոյն ձեռազրի մը՝ Երուսաղէմի յոյն պատրիարք Խրիզանդէն Նորասէ: Կայ ևս Միքայէլ Պալէոլոգ կայսեր նուէրը առ Ս. Լուգովիկոս թագաւոր՝ գործ ժի՞ս դարու:

Չորեցասաներորդ զարէն կը սկսին ձեռազրիներ կէս յոյն և կէս լատին նշանագրերով: — Յոյն գիրերը մտնելով արևմտասեայց մէջ՝ ունեցան իրենց կերպարանափոխութիւնը:

Ուլիկիւա՝ չորրորդ դարուն հնարեց կէս-գոթական ձեզ ձեռազրաց մէջ, որոնց սակաւաթիւն են:

Ալաւական գիրերը նմանութիւն ունին փերջնոցս: Ս. կիւրեղ հայրապետ իններորդ դարուն հնարեց՝ կամ լւա ևս՝ յունական գիրերուն վրայ յարմարցուց: Բազմաթիւ են այս տեսակ ձեռազրիներ Բարիզ, Պոլոնիա, Հռովմ, մասնաւորապէս Գերմանիոյ մէջ, և նշանաւոր է Հռէմսի մէջ զըտնուածք:

Լատին ձեռազրաց հնագոյնն է պապիրի վրայ գրուած մը, որ թագաւորական վրճառազրոյ մը հասուածը կը պարունակէ և գտնուած է Եղիպոտոսի մէջ՝ գործ երրորդ դարուն. ինչպէս Վիերգիլիոս մը Գ. զարունրանկար ձեռազրիը, որ Վատիկանու ձեռազրատան արծէքաւոր գանձէ Այս յարու զործ է կիւրեղոնի՝ Յաղազ հասարակապետութեան կրկնազիրը: Կը գտնուի ի Վատիկան նաև Ե. զարու մէջ զրուած Վիերգիլիոսը, և այլն:

Արդարե խիստ հաճելի էր մեզ ասոնց էտո յաւելու հոս նաեւ մեր պաշտելի Սուլբ Թարգմանչաց ձեռազրաց նշանաւորագոյններուն յիշատակութիւնը, բայց այդ մասին հաւաքածոն լաւագոյն ժամանակի թողլով՝ այսափ ինչ կրնանց զուր-

ցել, որ թէեւ հալածեալ և չարշարուած և հայրենիքը վտարուած և չարագոյն կերպով մարտիրոսացած ժողովորդ մ'է եղած Հայը՝ բայց կընայ պարծիլ նաեւ իւր տեսակ տեսակ և հնագոյն ձեռագիրներովն անգամ, թէեւ ասոնց ևս անշունչ սրբազն հատորներ՝ սակայն անասնական բարբարոսութեան մը զոհեր եղեր են զերջին համաշխարհային պատերազմին միջոց՝ յափունական նախատինք և կորանց վանդալաց :

Ո. Կ.

Գ Ր Ա Կ Ա Ն

Այս երկու գաւառացի անտիպ երգերը ժամանակաւ (1900) Մուշեն դրկուած են Հ. Ան. Վ. Գոնսաքենեանէ:

ԽՄԲ.

Բ Ո Ւ Բ Ո Ւ

○ ○

ԵՐԳ ԹԱԳԻՌՈՐԱՑ

Թագուոր բարով հազար բարով,

Դուն վարդ ես կանանչ տերեսով,

Ս. կարապետ զարեկ պաշխէ

Ասուծոյ Ս. զօրութենով:

Թագուոր բարով հազար բարով,

Դուն վարդ ես կանանչ տերեսով.

Ս. Յովկաննէս զարեկ պաշխէ

Ասուծոյ Ս. զօրութենով:

Թագուոր բարով հազար բարով

Դուն վարդ ես կանանչ տերեսով.

Ս. Սարգիս զարեկ պաշխէ

Ասուծոյ Ս. զօրութենով:

Թագուոր բարով հազար բարով,

Դուն վարդ ես կանանչ տերեսով.

Ս. Թուխմանուկ զարեկ պաշխէ

Ասուծոյ Ս. զօրութենով:

Թագուոր ինչ բերիս քի նըման

Դու կանանչ արև քի նըման.

Ըն վարդենին որ կու ծաղկէր

Նան ու ծաղիկ քի նըման:

Գացեք կանէք զթագորահէր,

Ի գայ նըստի տարպազինէն,

Նըսկիկ զարէ Ս. սեղանին:

Թագուորին ծաղիկ պիտէր ծաղկունեաց

Այս ինչուինչ ծաղիկ պիտէր ծաղկունեաց

Փըթըթէր նուզն ու տերեւ հաւ իրանց:

Մեր թագուորն էր իսաւ. ձեր թագուորն է իսաւ

իսավ փոկ, իսայումաչ, պըսակն էր կանանչ:

Մատվաներ կանանչ արևն էր կանանչ:

Ըն լուսին սարն ի ելաւ, տեսէք ըն ո՞րն էր,

Ըն ճընճուղ ճըլվասան էր, տեսէք ըն ո՞րն էր,

Ըն կաբաւ կրկընան էր, տեսէք ըն ո՞րն էր,

Ըն արօս հազարագին, տեսէք ըն ո՞րն էր,

Ըն զոհալ աստղը կըշտին, տեսէք ըն ո՞րն էր:

Ըն լուսին սարն ի ելաւ՝ մեր նոր թագուորն էր,

Ըն ճընճուղ ճըլվասան էր՝ վարդապետներն էր,

Ըն կաբաւ կրկընան էր՝ սարկաւագներն էր,

Ըն զոհալ աստղը գիրք աւետրան էր,

Ըն զոհալ աստղն ի կըշտին՝ թագուրակնն էր,

Ըն աշի պիծի խընճոր՝ թագուրահէրն էր,

Ըն ամի պիծի խընճոր՝ թագուրամէրն էր:

1. Աշխարք կթելու զործն:

2. Անքառյալ: